ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 6-ին Վեհափառ Հայրապետի գահակալության երեսնամյակը շնորհավորելու էին եկել Նորին Սրբության առաջին աշակերտները՝ շուրջ 40 հոգի, Բուխարեստի երբեմնի Միսաքյան-Քեսիմյան դպրոցից: Մեծ մասը այսօր հայրենիքում գտել են իրենց պատվավոր տեղը կյանքում՝ գիտության, արվեստի և այլ ասպարեզներում:

Վեհափառ Հայրապետի աշակերտները նպատակ են ունեցել Երևանում հավաքել Նորին Սրբության աշակերտներին աշխարհի տարբեր վայրերից՝ գալու, շնորհավորելու իրենց սիրելի Ուսուցչի հայրապետական բեղուն գործունեության երեսնամյակը. այդ է պատճառը, որ ներկայանում են հանդիսության օրերից բավական մեծ ուշացումով:

Նախ ողջույնի և հարգանքի խոսք առավ բժշկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի վարիչ տիար Հ. Առաքելյանը: Նա խորին երախտագիտություն հայտնեց Նորին Սրբությանը՝ իրենց մատուցած գիտելիքների և ազգային ոգու համար: Հիշողությունները մարդու կյանքն իսկ են, իսկ աշակերտները հիշում են իրենց երիտասարդ ուսուցչի ոգևորությունն ու եռանդը:

Ապա ողջույնի և շնորհավորանքի խոսքով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլանջյանը: Նա ի միջի այլոց ասաց.

«ՄԵՐ ՇԱՏ ԹԱՆԿԱԳԻՆ ԵՎ ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այսօր բացառիկ հիշարժան տոնական օր է Բուխարեստի երբեմնի Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանի հայրենաբնակ Ձերդ Սրբության սաների համար, որոնք եկել են երկյուղածությամբ և անհուն սիրով ի պրտե շնորհավորելու Ձերդ Վեհափառության գահակալության 30-ամյա պանծալի տարեդարձը: Վեհափառ Տեր, թույլ տվեք այստեղ ներկա աշակերտներիս միջոցով հաղորդելու Ձերդ Սրբության ի Հայաստան, ի Ռումինիա և ի սփյուռս աշխարհի ցրված Ձեր մեծ թիվ կազմող երախտագետ աշակերտների որդիական զգացումներն ու սրտագին շնորհավորությունները:

Ձերդ Վեհափառությունը բազում սերունդներ է դաստիարակել. այսօր Հայաստանում, Սովետական Միության տարբեր մասերում, ինչպես նաև Սփյուռքում գործող հայ հոգևորականության կարևոր մեկ մասը Ձեր սաներն են: Սակայն մենք մեզ հպարտ ու երջանիկ ենք զգում հատկապես, որ հանդիսացել ենք Ձեր ավագագույն աշակերտները և հաղորդակից ենք եղել Ձեր հոգու գանձերին և հայրենասիրական պատգամներին: Արդեն ավելի քան կես դար է անցել Բուխարեստում Ձեր ծավալած մանկավարժա-

կան, հասարակական և հրապարակագրական բալմարդյուն գործունեությունից, սակայն մեր մեջ միշտ վառ է մնում Ձեր կյանքի մեծ օրինակը, Ձեր անսահման նվիրումը հայը Հայ պահելու վսեմ գործին, հայաշունչ ոգին: Ձեր կյանքը ամբողջությամբ բացառիկ նվիրում հանդիսացավ: Ռումինիայի հյուսիսում, Հաճկատարի հինավուրց հայկական ուխտատեղի-վանքում, Ձեր վարդապետական քառասունքը անցկացնելուց հետո, Դուք կարողացաք Ձեր անձով իսկ հարթել ռումինահայ թեմի տագնապալի իրավիճակը, մեծ ձեռնհասությամբ ղեկավարեցիք Ռումինիայի և ապա Բուլղարիայի հայկական թեմերը և անսալով երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի կանչին, փութացիք այստեղ իբրև հավատավոր ծնողների արժանավոր կավակ և տեսիլք ունեցող հոգևորական և դարձաք ապգընտիր և Աստվածապարգև Հայրապետ Ամենայն Հայոց: Ձեր օրոք իր նոր վերածնունդն ապրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ձեր նախաձեռնության շնորհիվ նախ ամրապնդվեց նրա նյութական հիմքը, Ձեր թելադրանքով և արվեստասերի նրբապգաց հայացքի տակ իրենց երկրորդ կյանքն սկսեցին ապրել մեր բակում ճարտարապետական հուշարձանները, նոր վերելք ապրեցին հոգևոր ճեմարանն ու Հայաստանի և Սփյուռքի բակում եկեղեցիներ: Ձեր միջոցով կրկին վառվեցին Վեհարանի լույսերը: Նույնիսկ օվկիանոսներից այն կողմ Ձեր կատարած հովվապետական ուղևորությունների ընթացքում առատորեն բաշխեցիք Էջմիածնի լույսի շողերը և կյանքի կոչեցիք ուծացման եզրին հասած սփյուռքահայ սերունդներին, ստեղծելով դարակազմիկ մի ոսկե կամուրջ Սփյուռքի, Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի միջև:

Բովանդակ հայ պատմության ամենաերջանիկ Վեհափառ Հայրապետներից եղաք՝ գործելով հայկական պետականության, մեր ժողովրդի վերածնունդի և ծաղկման շրջանում, հնարավորություն ունեցաք իրականացնելու Ձեր գեղեցկագույն մտահղացումները: Դուք չունեցաք Ձեր անձնական կյանքը. հայ ժողովուրդ, Հայ Հայրենիք և Հայ Եկեղեցի,—ահա ձեր նվիրյալ կյանքի բացառիկ առաքելության մեծ ոլորտը՝ հոգևոր կյանք, մշակույթ, շինարարություն, ինչպես նաև հայրենասիրական, միջեկեղեցական հարաբերությունների և խաղաղության պաշտպանության գործեր:

Թանկագին և շատ սիրելի Ուսուցիչ մեր՝ Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց, Ձեր անձը, բացառիկ Ձեր նվիրումը, ապգանվեր և հայրենանվեր Ձեր խիպախումները վաղուց է, որ դարձել են մեկ հասար ներշնչման աղբյուր. Ձեր ավագ աշակերտներից ոմանք փորձում են գնալ Ձերդ Սրբության լուսավոր փորձում են գնալ Ձերդ Սրբության լուսավոր հետքերով: Նրանք Հայաստանում, Ռումինիայում և երկրագնդի տարբեր մասերում նիայում և երկրագնդի տարբեր մասերում հայրենց մասնակցությունն են բերում հայապահպանման և հայ մշակույթի հարատևման գործին: Հայրենիքում Ձեր սաներից դարձել են Հայաստանի գնահատված ժողովրդական դերասանուհի, ակադեմիայի ինստիտուտներից մեկի տնօրենի տեղակալ, բժշկական և պոլիտեխնիկական ինստիտուտների ամբիոնի վարիչներ, օտար լեզուների դասախոսներ, նկարչուհի, գիտության տարբեր ասպարեզների ավագ գիտական աշխատողներ, գիտության դոկտորներ և թեկնածուներ, ճարտարապետներ, ինժեներներ, պատմաբաններ, քիմիագործներ, տընտեսագետներ, ուսուցիչներ և այլն:

Վեհափառ Տեր, Ձեր ծննդյան 80-ամյա պանծալի տարեդարձին խոստանում ենք ներկայանալ ավելի մեծ թվով և հնարավորության դեպքում մեկ հետ բերել նաև Ռումինիայում և Սփյուռքի տարածքում բնակվող Ձեր աշակերտների ներկայացուցիչներին: Թանկագին մեր Ուսուցիչ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս, մեկ անգամ ևս թույլ տվեք աշխարհով մեկ սփռված և մեծ թիվ կազմող Ձեր սաների կողմից ի խորոց սրտի շնորհավորել Ձերդ Վեհափառության գահակալության 30-ամյակի առթիվ և ցանկանալ երկար կյանք և նորանոր խիպախումներ Ձեր փայփայած բոլոր երազանքները ի կատար ածելու՝ ի փառս Հայ Եկեղեցու, հայ մշակույթի և հայ ժողովրդի:

Հակիրճ, բայց հուզառատ սրտի խոսք ասաց ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանը:

Հուսկ հետո տիար Հ. Առաքելյանը խմբի անունից, իբրև երախտագիտության նշան և ի շնորհավորումն, Վեհափառ Հայրապետին նվիրեց արծաթյա վիշապակարդ և ականակիր մեծ գավաթ:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց և իր նախկին աշակերտներին մաղթեց քաջառողջություն և աշխատանքային-ստեղծագործական բեղմնավոր գործունեություն:

Հանդիպումն անցավ շատ ջերմ մթնոլորտում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ